բամոմը՝ նախ նաղ-պարի ռիթմով, ապա արագաշարժ կաքաւով՝ պէտք է մեծ ակորդների լոյսը ցանի փայլուն տախտակների վրայ եւ դառնայ մի տեսակ հայելի:

Հայելիի մէջ —

Յաղթանդամ, լայնագիստ եւ երկայնաբազուկ վարիչի ստուերը: Անգլիական զօրքերի ծանրածանր կօշիկներ, մինչեւ ծունկերը իջնող լայնածաւալ տարատ, երկայն վերարկու եւ փիղի քալուածք: Մի տեսակ ալպեան որսորդ՝ ազատ ժամանակին գիւղերում հրապարակային ըմբիշ եւ նաեւ երաժիշտ, որովհետեւ տասը տարի առաջ գրել է երկու մեղեդիներ՝ վարդ, լուսին, հառաչ:

Շուրջը՝ տիկինը եւ աշխատակիցները:

Տիկինը՝ սրածայր թռչունի քիթ, խոր ընկած կրծքեր, վատ ստամոքս, դեղնած դոյն եւ թոյլ թոքեր: Երգչուհի է, Պետերբուրգի կոնսերվատորիայից, մեծ յաջողութիւններ չունեցած պրիմադոննայի ձեւերով, գոռոզ եւ նախանձոտ, բարեհաճել է գալ Հայաստան, ողորմելի այս երկիրը, մինչ, կարող էր, եթէ ուզէր, եւրոպական աստղ դառնալ: Երկրպագեցէք:

Մեր սիրելի տենորը: Դեռ կերած խաչը չի մարսել, քունը գլխի մէջ ճանճեր է պարեցնում, փորը ուռել է եւ աչքերի մէջ թաւշեայ ժպիտ է նստել: Նայում է, չի հասկանում՝ երեխայ:

Դաշնակահարուհիները: Գերմանական դպրոցը՝ պաղ, չոր, լուռ, մեքենական շարժումներ, գերծ աւելորդ ոգեւորութիւններից: Իտալական դպրոցը՝ կարճահասակ, մեծ կապտաւուն աչքեր, մանկական միամտութիւն, կոյր հաւատք, գայլերի մէջ ընկած գառնուկ, Ֆրեսկոբալդի եւ հառաչանք:

Ջութակահարները: Բարձրահասակ մի տղայ, իր մօր միակ յոյսը, տաղանդաւոր: Ուզում է մի կերպ իրեն դուրս նետել, դէպի Մոսկուա, արտասահման, ուր լինի: Ամէն տեղ նուադում է, ամէն կողմ վազում: Երեւանի Պագանինին:

Ուրիշներ, ուրիշներ:

Պետական Երաժշտանոցում կան նաեւ աշակերտներ:

Կարմիր բանակայիններ՝ զօրանոցների հոտը եւ պատերազմների դաշտը մաքուր յատակի վրայ:

Չեկայի անդամներ՝ մաուզերը կողքին, աչքերը սրած եւ կօշիկները կեղտոտ:

Վարիչը.— Ներեցէք, ընկեր, դուք ի՞նչ էք ուզում սովորել:

Չեկան.— Դաշնամուր:

Վարիչը.— Քանի՞ տարեկան էք:

Չեկան.— 34:

Վարիչը.— Ճիշդ լաւ ժամանակն է: Միայն խնդրում եմ, երբ ներս էք մտնում, բարի եղէք ձեր կօշիկները մաքրել: Գիդիենա՝ հասկանո՞ւմ էք...

Չեկան.— Դա ի՞նչ նորութիւն է:

Վարիչը.— Մի բան էր ասացի...էնպէս...

Չեկա.— Հը՛ըը...

Եւ վարիչը դոյնը նետում է:

Վանուհիներ՝ սովորում են երգեցողութիւն, եթէ նրանց հայրերը պրոֆիլութեան անդամներ են, բժշկութիւն, եթէ վաճառական են, եւ մանկաբարձութիւն, եթէ անորոշ գործով են զբաղւում:

Մի թուրք թմբուկի դասեր է առնում:

Կան երախաներ, եւ մանաւանդ, երեք չորս առանձնաշնորհեալ, տարիքը մի քիչ առած տիկիններ, որոնք երաժշտանոցին առանձին փայլ են տալիս: Հաղնւում են համարձակ՝ թեւերը բաց՝ նօտաները ձեռքին բռնած փողոցներում ման են գալիս, քսւում են, բարձր ծիծաղում, սիրուն երիտասարդների հետ ման գալիս, սըրճարան մտնում: Արուեստը սիրում է ազատ բարքեր:

Ուսուցիչները հրաւիրւում են առանձին սենեակ:

Դռները պինդ փակեցէք: Երգեցողութեան դասատուները թող ցած ձայնով խօսեն: Դրութիւնը շատ լուրջ է:

Դրութիւնը շատ լո՞ւրջ է: Տենորը միանգամայն խաչը մարսում է, տիկնոջ քիթը երկարում է ,եւ տուփերի մէջ բոլոր ջութակները սկսում են լալ:

Մեր թշնամիները գործում են,— ասում է վարիչը, ճակատի մալարիան սեղմելով: — Գնացի...տեսայ...լսեցի... հասկացայ Երաժշտութիւնը անցնում է տաղնապալից մի ճգնաժամ: (Այստեղ, վարիչը լալկան ձայնով

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան